ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» սեպտեմբերի 2017 թվականի N 177-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի վարչական տարածքում գտնվող Երևան - Գառնի մայրուղու թիվ 16 հասցեից բաժանված 1,0 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/4, 0,2687 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/5, 0,70807 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/6, Երևան - Գառնի մայրուղու թիվ 12/1 հասցեից բաժանված 1,94787 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 12/2, Երևան - Գառնի մայրուղու թիվ 14 հասցեից բաժանված 1,07536 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 14/1:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» սեպտեմբերի 2017 թվականի N 178-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արտակ Մանվելի Երանոսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 44-րդ փողոցի թիվ 69 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Քաղաքացի Աշոտ Ծատուրյանի ընտանիքին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 24-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» սեպտեմբերին 2017 թվականի N 179-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 24-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2017 թվականի օգոստոսի 24-ին կայացած աճուրդի արդյունքները հաստատելու, աճուրդային վաճառքի հաղթողին հողամաս տրամադրելու և հողամասի օտարման պայմանագիր կնքելու մասին» թիվ 172-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2017 թվականի օգոստոսի 24-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդի NN 2/1-2/3 արձանագրությունները, ***որոշում եմ.***»,

2) որոշման 2-րդ կետում «Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղար» բառերը փոխարինել «աշխատակազմի քարտուղար» բառերով,

3) որոշմամբ հաստատված հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)»:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» սեպտեմբերի 2017 թվականի N 180-Ա

ՎԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի թիվ 4/37 հասցեում բնակվող Վանուշ Մնացականի Մնացականյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ կինը թոշակառու է, ինքը՝ 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառու, անընդհատ գտնվում է բժիշկների հսկողության տակ, ընտանիքի երկու անձով բնակվում են 2-րդ դաշտի թիվ 4/37 հողակտորում կիսակառույց շինությունում և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Վանուշ Մնացականի Մնացականյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին, բյուջեի համապատասխան հոդվածից Վանուշ Մնացականի Մնացականյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» սեպտեմբերի 2017 թվականի N 181-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 39-րդ փողոցի թիվ 19 հողակտորում տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«8» սեպտեմբերի 2017 թվականի N 182-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Քաղաքացի Կաքավիկ Օնիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 1 և 27-րդ թաղամասի թիվ 1/1 հասցեի հողակտորներում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28042017-07-0089 վկայականում նշված թիվ 1 այգետնակը՝ 130,74 քառ.մետր մակերեսով և թիվ 28042017-07-0014 վկայականում նշված թիվ 1 այգետնակը՝ 109,13 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 11,5 քառ.մետր մակերեսներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 8
գ. Ջրվեժ